

BTM ջրամեկուսիչ մեմբրաններ

BTM Botanik PP3000- ը ջրամեկուսիչ մեմբրան է պոլիէթերային թաղիքի (войлок) կրող շերտով, որն արտադրվում է ՄԲՍ (ստիրոլ-բուտադիեն-ստիրոլ) մոդիֆիկացված բիտումից: Մեմբրանի ստորին և վերին մակերևույթները պատված են պոլիէթիլենային թաղանթով, կայուն է բույսերի արմատների նկատմամբ, ունի ճկունության բարձր ցուցանիշ, տեղադրվում է բոցամուղի կրակի միջոցով կամ տաք ասֆալտով: BTM-ն արտադրում է տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող 4 տեսակի Botanik տանիքածածկ նյութեր:



Կիրառման ոլորտը

- շենքերի կանաչ տեռասանների ծածկույթներ,
- պատերի և հիմքերի միացման տեղերում կամ շինարարական կոնստրուկցիաների գրունտի հետ միացման տեղերում ջրամեկուսացման իրականացման համար,
- ցուրտ կլիմայական պայմանների համար մշակված BTM Botanik ջրամեկուսիչ մեմբրանն օգտագործվում է գրունտի հետ առնչվող բոլոր մակերևույթների ջրամեկուսացման համար, որտեղ անհրաժեշտ է ստորին և միջանկյալ մեմբրանի ճկունության ապահովում:

Մակերևույթի նախապատրաստումը մինչև նյութի տեղադրումը

Մինչև նյութի տեղադրումը մակերևույթը պետք է մաքրվի փոշուց, ժանգից, յուղերից և մնացած կողմնակի նյութերից:



Կիրառման եղանակը

Եթե ջրամեկուսացման ենթարկվող մակերևույթը բետոնից է, ապա այն պետք է պատվի անհրաժեշտ թեքություն ունեցող սվաղով (стржка) և հարթեցվի փայտյա մաքուր ու չոր գրտնակով: Նախքան մեմբրանի տեղադրումը մակերևույթը պետք է պատել BTS 100 (TS103) բիտումային կամ էմուլսիայի հիմքով նախամերկով (грунтовка), որից հետո սպասել մինչև վերջինիս լրիվ չորանալը: BTM Plastobit ջրամեկուսիչ մեմբրանի տեղադրումը պետք է սկսել տանիքային ծածկի ամենացածր կետից (թեքության ամենացածր միջից)՝ գնալով թեքությամբ ուղղահայաց ուղղությամբ: BTM Plastobit մեմբրանը սոսնձվում է մակերևույթին բոցամուղի կարկով տաքացնելու միջոցով: Յուրաքանչյուր շարքի մեմբրան եզրով տեղադրվում է նախորդ շարքի մեմբրանի վրա՝ կարճ ծայրերում ոչ պակաս 15սմ-ից, իսկ երկար ծայրերում՝ ոչ պակաս 10սմ-ից: Կցվանքների

(СТԻԿ) մասերը պետք է սոսնձել առավել մանրակրկիտ: Ծածկող եզրաշերտը շերտերի միջև պետք է լինի կարճ կողմերում՝ մինչև 50սմ, երկարներում՝ մինչև 5մ:



Փաթեթավորումը

BTM Botanik մենբրանը թողարկվում է 1մ լայնությամբ և 10մ երկարությամբ գլանափաթեթների տեսքով:

Պահպանման պայմաններն ու ժամկետները

BTM Plastobit մենբրանի գլանափաթեթները պետք է պահել փակ տարածքներում՝ ուղղաձիգ դիրքով: Երկար ժամանակ դրսում գտնվելու դեպքում գլանափաթեթները արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանելու համար անհրաժեշտ է ծածկել: Տակդիրներում (поддон) գլանափաթեթների պահեստավորման ժամանակ չի թույլատրվում դրանք երկու շարքից ավելի տեղավորել մեկը մյուսի վրա: